ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.07.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/105

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ՝

Բ. Արամյանի (լիազորագիր, տրված՝ 08.07.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.06.2019թ. թիվ /26/10897-2019 գրությամբ Մարինե Կույումջյան Միհրանի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 18.06.2019թ. թիվ 01/61-11662 գրության հիման վրա, 28.06.2019թ. թիվ /26/10897-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել Մարինե Կույումջյան Միհրանի Ա/Ձ-ին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Մարինե Կույումջյան Միհրանի Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ Մարինե Կույումջյան Միհրանի Ա/Ձ-ի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/105 ընթացակարգի շրջանակներում 08.07.2019թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 18.06.2019թ. թիվ 01/61-11662 գրությամբ հայտնել է, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Պատվիրատուի կողմից կազմակերպված «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/81» ծածկագրով գնման ընթացակարգի (հետայսու՝ նաև Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի 31.05.2019թ. որոշմամբ առաջին և երկրորդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել Մարինե Կույումջյան Միհրանի Ա/Ձ-ն:

05.06.2019թ. Մասնակիցը ներկայացրել է դիմում 2-րդ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելուց հրաժարվելու վերաբերյալ: Հիմք ընդունելով Մասնակցի դիմումը՝ գնահատող հանձնաժողովը որոշել է 2-րդ չափաբաժնի մասով մերժել Մասնակցի հայտը և առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/105 ընթացակարգի շրջանակներում 08.07.2019թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2019/105 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2019/105 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/81» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Մարինե Կույումջյան Միհրանի Ա/Ձ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.05.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ Մարինե Կույումջյան Միհրանի Ա/Ձ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.05.2019թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Մարինե Կույումջյան Միհրանի Ա/Ձ-ն ճանաչվել է ընտրված մասնակից Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված 05.06.2019թ. գրությամբ Մարինե Կույումջյան Միհրանի Ա/Ձ-ն Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 28.06.2019թ. թիվ /26/10897-2019 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 18.06.2019թ. թիվ 01/61-11662 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Երևանի քաղաքապետարանի կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/81» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Մարինե Կույումջյան Միհրանի Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.05.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ Մարինե Կույումջյան Միհրանի Ա/Ձ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.05.2019թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Մարինե Կույումջյան Միհրանի Ա/Ձ-ն ճանաչվել է ընտրված մասնակից Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված 05.06.2019թ. գրությամբ Մարինե Կույումջյան Միհրանի Ա/Ձ-ն հայտնել է, որ Մասնակցի կողմից տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ (քանի որ համակարգչում 6 և 3 նիշերն իրար շատ մոտ են տեղադրված մեխանիկորեն 6 590 000 փոխարեն սեղմվել է 3 590 000, որն այդ պահին

Մասնակիցը չի նկատել), այդ պատճառով Մասնակիցը չի կարող իրականացնել 2-րդ չափաբաժնի մասով գնման կազմակերպումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ **մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:**

Այսպիսով՝ Մարինե Կույումջյան Միհրանի Ա/Ձ-ն Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչվելուց հետո Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ուղղված 05.06.2019թ. գրությամբ հրաժարվել է պայմանագիր կնքելուց, ուստի արձանագրում եմ, որ վերջինս թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի խախտում, հետևաբար առկա են Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.06.2019թ. թիվ /26/10897-2019 գրությամբ Մարինե Կույումջյան Միհրանի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Մարինե Կույումջյան Միհրանի Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**